Գիտե՞ք, որ...

Դիզայնի հետազոտություն

Դիզայնի հետազոտությունը հնարավորություն է տալիս համեմատել տեսական և գործնական գիտելիքները: Դիզայնի ուսումնասիրությունն ավելի շատ միտված է արդեն գոյություն ունեցածը վերագտնելուն, վերափոխելուն, քան թե նորը հորինելուն: Քրիստոֆեր Ֆրեյլինգը պնդում էր, որ գոյություն ունի դիզայնի հետազոտության երեք հիմնական բաղադրիչ՝

ա) դիզայն ստեղծելու համար հետազոտություն,
բ) դիզայնի միջոցով հետազոտություն,
գ) դիզայնի համար հետազոտություն:

Դիտարկենք ըստ բաղադրիչների՝

- **Դիզայն ստեղծելու** համար անհրաժեշտ է գեղագիտական դիզայնի և արվեստի վերաբերյալ հետազոտական գործունեություն կազմակերպել:
- **Դիզայնի միջոցով** հետազոտությունը մի գործունեություն է, որը ներառում է անհրաժեշտ նյութեր և մշակումներ նախագծի համար:
- **Դիզայնի** հետազոտությունը ուսումնասիրում է մի համակարգ, որը ցույց կտա տվյալ հետազոտության օբյեկտն ու արդյունքները, միևնույն ժամանակ կհիմնավորի այդ գործունեության արդյունքները: